


ՏՆՈՐԷՆ-ՆՄԲԱԳԻՐ
ՅԱՐՈՒԹԻՒՆ ԱՂՓԻԱՐ

Նամակ կամ ուրիշ քրոսիկ
պէտք է ուղղել առ

ԽՐԱԿՐՈՒԹԻՒՆ ՓԱՐՈՍ ԼՐԱԳՐԻ
Պապար Լեւոնուր, ԳԱՇԻՐԷ

Direction du journal P. ROS
Bazar Mourour, CAIRE Egypte



Լ Ր Ա Գ Ի Ր

ԱԶԳԱՅԻՆ, ԳՐԱԿԱՆ ԵՒ ՔԱՂԱՔԱԿԱՆ

ԿՐ. ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹԻ ՉՈՐԵՔՇԱՐԹԻ ԵՒ ՇԱՐԱԹ ՕՐԵՐԸ

ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹԻՒՆ

Եզրի գրութի համար տրեկն ուղ զի. 80
» » վեցամսեայ » 50
03 առ եզրիներ տրեկն Զրաւն 25
» » վեցամսեայ » 14
Թարսարի ծախքը խմբագրու-
րէն վրայ է :

Խմբագրութեան ուղղութեամբ
մակ կամ այլ քրոսիկն եւ չի տրուիր :

ԹՈՒԼԱՍՈՐԹ

Ազգային երգի մը մէջ շատ իրաւամբ այս
ածականը տրուած է քաղքենի հայուն :

Եթէ տնտեսի մը պարտքները մեր չլիւ
գին՝ առգայն, կարգաւորել երկուստեքներէ,
գանդաղ կիներէ, խամրած կոյսերէ և ար-
գահատելի ծերերէ զատ ոչինչ կը տեսնենք :

Բարոյական շատ մը առաւելութիւններու
քով՝ ֆիզիքական խիստ ուղղման յատկութիւն-
ներ ունինք : Ոչ եւրոպացիին աշխարհը կայ
մեր վրայ և ոչ արեւելցիին տոկոսութիւնը :

Եւ այս գեղարդութիւնը անոր համար է
որ մենք, քաղքենի հայեր, պէտք եղածին
չափ խնամք չենք տանիր մեր մարմնին :

«Առողջ միտք յատուկ մարմնի» այնքան
չափ կրկնուած առած մըն է որ հոս մէջ բե-
րիւր նորութիւն մը ըսել տուած չըլլար մեզի :
Սակայն ընդհանրապէս մեր մէջէն ոչ ոք ատոր
կարեւորութիւնն տեսած և անխուսափելի ճիշ-
մարտութիւն մը ըլլալուն համոզուած է :

Ինչո՞ւ համար կը հիանանք եւրոպացիին
աշխուժութեանը վրայ, ինչո՞ւ սքանչացում մը
կզգանք անոր գեղեցիկ կազմին հանդէպ և
ինչո՞ւ պատկառանք կազգեն մեզի անոնց կո-
րովի և առողջ ծերերը ու պառաւ կիները :

Եւ ըսե՛ք թէ այնքան գիւրդին բան է ա-
նոնց նմանի :

Մի՞ կարծէք թէ մեծ զոհողութիւններու,
ժամանակի կորստեան, ահագին ծախքերու
և կամ անտանելի յոգնութեան պէտք կայ
անգլիացիի մը պէս բարեհաւ և կրօնի մար-
մին մը ունենալու, կամ գերմանի մը պէս
յոգնութեամբ ըլլալու համար :

Ծննդեամբ անոնք մենէ աւելի գեղեցիկ
կազմ մը չունին, բայց կը գարմանեն և կը
խնամեն իրենք զիրենք և մենք ընդհակառա-
կը կը քայքայենք մեր մարմինը և երբեք խը-
նամք չենք տանիր անոր :

Մարմնամարդը ու լոգանքը մեր սովորու-
թիւններէն և բարքերէն խոյս կուտան, շու-
րէն կը խրոչինք և խորչում կզգանք այն ա-
մեն միջոցներէ որ մարդու մարմինը թարմ
և յաղթ պահելու բնոյթը ունին :

Trapèzeը, տուշը կամ լոգարանը այն է
եւրոպացիին համար, ինչ որ է մեզի համար
սուրճը : առտուն կանուխ զայն կը փնտռենք
ամեն բանէ առաջ :

Մեր մարմինը տալին հազիւ քանի մը ան-

դամ շուր կը տեսնէ, իսկ trapèzeը երբեք
տեսած չունինք :

Այս մը շուրջ երեսնիւ կը լուսնը և բամ-
բասներէ, խաչիկէ զատ ուրիշ exercice չու-
նինք այժմ առնելու և մարմինն գարմանելու
համար :

Քսան տարեկան մանչը ինչպէս նաեւ
աղջիկը մեր մէջ կուզ մը ունի կոնակը, գոյ-
նը կը պակ-ի երեսէն, աչքերը սեւ-կապոյտ
չըլանակի մը մէջ կը փաթկին, ոչ ոտքերուն
վրայ այժմ կայ և ոչ ալ մարմինն վրայ չնորհ :

Տարեցներու վրայ խօսիլ աւելորդ է :

Եւ ինչ նախնական պէտք մըն է որ մին-
չեւ այս օր, զեւ անտես առնուած է մեր
մէջ :

Մեր կիները մանաւանդ իրենց մարմնին
պաշտամունքը չունին առիշտ գիւրդի կիներու պէս :
Առողջ մայր մը և գեղեցիկ կին մը ըլլալու
համար մարմինը ամեն բանէ առաջ ուշա-
գրութեան առնելու է :

Առտուն անկողնէն ելլելուն պէս շուրի
մէջ նետուիլ հայ կնիկն մը համար այնքան
գեղարդ է որքան գեղարդ է բարեկարգութիւն-
ներ մոյցնել տալ Փաքը Ասիոյ մէջ :

Բազմիքի պէտքը զգալի ըլլալէ աւելի
տեսանելի պէտք է ըլլայ, ու մեր կիները օ-
րերով մտածելէ ետքը բազմիք երթալ որո-
շեն : Պարզապէս պոգալի է ասիկայ :

Գեղեցկագիտական հանգամանք մը չէ որ
անոնցմէ կը պահանջենք, ընդհակառակը տար-
բախտ պէտք մը զոր մինչեւ այժմ զանց ը-
րած ըլլալուն համար մէկէ աւելի պատճառ-
ներ ունինք յաւելու :

Նոյն իսկ ազատ աւարը՝ գոնէ կրօնապէս
տոկոսեալ ըլլալուն՝ օրը քանի մը անգամ կը
լուսնայ : Եւրոպացիին մարմնութեան աւելի ոյժ
կապառէ շուրէն, իսկ մենք կը կարծենք թէ
շուրջ խմուելիք հեղուկ մըն է որ օգիւն զօրու-
թիւնը չլսանելէ զատ ուրիշ յատկութիւն
չունի :

Քնալի գրութիւնը պաշտպանել չէ միտ-
քերնիս, բժշկական օրէէ հանգամանք չունինք :
մեր գիտաւարութիւնը խրատել է մեր քաղ-
քենի հայերուն, ընդհանրացնել պանեօի, տու-
շի, ժիւմնաքիլի կիրառութիւնը սրտնցմէ ա-
պահ չապէս կօշտուին նախ մարմինը և ապա
միտքն ու հոգին և այսպէսով կը դադրինք
«Թուլամորթ»ներ ըլլալէ :

ՀԱՅԵՐՆ Ի ԿԻՊՐՈՍ⁽¹⁾

(ԿԱՄԱԿ ԱՌԻՄԱԳՐՈՒԹԻՒՆ)

ԿԻՊՐՈՍ, 17/29 Օգոստոս

Ձեր 7 օգոստոս թիւին մէջ Հայերն ի Կիպրոս
վերնագրին տակ խմբագրականը կարգաւորի և կը
խնդրեմ որ յանուն ճշմարտութեան և ազգային շու-
հերուն, հաճիք հրատարակել հետեւեալ մէկ բանի
տողերը :

Ձեր յոգնածի վերջաւորին մէջ կը գրէք թէ
«Արեւելքի յոյն և հայ ազգերը՝ այս պահուս իրարու
բաղդակից, միեւնոյն պատճառով թշուառ և անապագ
վիճակի մը մէջ մին և միւրը, իրարու վրայ գուր-
գուրալու և իրարու խրախոյս տալու են, փոխանակ
մին գիւտն ապանելու, զիրար զրգարտելու» : Եւ
աւելի վերջը կը սրգելք թէ, «Այս երկու քոյր ազ-
գերը, ամէն ժամանակ աւելի հիմա պէտք է որ
ձեռք ձեռքի տան» և այլն :

Ընդհարմին համաձայն լինելով ձեր այդ կարծիքին,
գործնական թուեցաւ ինձ նոյն յոգնածի տառի
մասին մէջ տեսնել այն շարք մը տմարկանքներ և
ակնարկութիւններ, որոնք ձեր կողմէն եղած էին
Կիպրոսի յոյն ժողովրդին նկատմամբ :

Ձեռք կարծեք թէ այդպիսի բեղում մը գործածելով
է որ կարելի ըլլայ համերաշխութեան կապը հա-
տատել ընդ մէջ արեւելքի ընկճեալ ազգերուն,
ազատաբար նպատակի մը համար :

Անշուշտ իրաւունք ունի զայնքանալ այն Մե-
սսիկեի Ենիթիւնի մէջ հրատարակուած թղթակ-
ցութեան դէմ, բայց լուրջ պատճառներ ունի՞մ
սեւու թէ՛ այդ թղթակցութիւնը ոչ միայն չնեղու-
յայնք Կիպրոսի յոյն ժողովրդի իրենց ու կարծիքը,
այլ եւ գորշն անգամ յոյն չէ, պարզապէս թրքաւոր
մը, ի վնդլանքներու այն դատակարգին որը շու-
հեռալով ոչ հայրենիք, ոչ ազգութիւն, շատ ան-
գամ ամենապառաւ և անպատուաբար գերեք խա-
ղապած են արեւելքի մէջ :

Մտնէ հետեւեալ հաստեղի ժողովրդի մտքի
ու հայեացքին, նաեւ յոյն թերթերու մէջ գրուած
ներսոն, կրնամ սարահովել ձեզ թէ տեղւոյս յոյն
ժողովրդը, ընդհանուր կերպով լուս գիտաւարա-
թեամբ տոյգրուած է Հայոց մասին և երբեք ու է
յոյն մը լուս չեմ և չեմ ալ կարգապահ թէ «Հոս
եկոյ՝ զայլմիտ հայերը գոյ, մարդասպան, առա-
ջակ են» ինչպէս կը գրէ վերոյիշեալ թղթակցը :
Կարծեմ Մեսսիկեի մէջ միայն այդպիսի
յոյնացի գրադարձութիւն մը եղաւ :

Ճշմարիտ է սա՛յն, թէ՛ երբ բանի մը անգ-
լիստն բարեգործական ընկերութեանց կազմանէ
խնդր եղաւ, հայրենի երկրէն Կիպրոս փոխադրել
միտն հազար հայեր, այն տեսն Կիպրոսի լրագ-
րութիւնը ի մի ձայն բողբոյս այդ նպատակին իրա-

(1) Մ. Խ. — Պ. Սրվազեան, երբեմն խմբագիր
«Հայաստան» լրագրի, Կիպրոսի Ֆամակուսթա քա-
ղաքէն մեզ ուղղած է հետեւեալ նամակը իբրեւ պա-
տասն մը «Մեսսիկեի Ենիթիւնի» մէջ երեւց սծ
բորակցութեան գոր մեքն իսկ փութացած էինք ի վեր
հանել ժամանակին եւ հեքեք անոր նպատակաւոր
գրադարձութիւնները Կիպրոսի հայ գաղթականութեան
նկատմամբ :

գործման գէժ. րան մը, որ մեզադրելի չէ, նկատի առնելով Կիւրոսի տնտեսական վիճակը և այն ցեղաբանական խնդիրները, որոնք բնականապէս յառաջ պիտի գային այն ահաջին գաղթականական հաստատութեան, որոնց նմաններու մի նույնը տեսնուեցաւ և կը տեսնուի դեռ, օրինակի համար՝ Թրանսօլի մէջ: Արդէն այսպիսի վիթխարի փոխադրութեան, ազգային տեսակէտով մեծ վնասները ի նկատի առնելով, անցեալ տարի բողոքած էի Տէյլի Նիւսի մէջ: Ուստի այս մասին թէ՛ մեր ազգային շահերը և թէ՛ Կիւրոսի ժողովրդին պահպանման քննադրումը հակառակ են, այս տեղ մեծ թուով հայերու հաստատումը. բայց այս ըսել չէ թէ, բռնի մը հարկը գաղթականներու հաստատութեան Կիւրոսի ժողովուրդը հակառակած է, կամ կը հակառակի:

Յոյները խիստ պերճաբան կերպով կը խօսին այս տեղ հաստատուող հայ գաղթականաց վրայ: Անոնց պարկեշտութիւնը, աշխատասիրութիւնը և համեստութիւնը իրենց գաղափար պատճառած է: Դեռ երկիւքանի մը յոյներէ տրոտեններ ընցի, թէ՛ հայ գաղթականներու մի մասը մեկնած է Կիւրոսէն և յառաջ կը բերէին այն առաւելութիւնները, որոնք մուսուլման Կիւրոսի մէջ, հայ գաղթականներու ունեցած զանազան արհեստներէն. ու կը նմանցնէին զանոնք գաղղիացի huguenotsներուն որոնք արհեստներ ներմուծեցին յ'Անգլիա, համարաւոր Nantesի հրովարտուէին վերջ:

Վերջոյնեղով խօսքս, ի մէջ բերեմ դէպք մը. —Երբ յունական պատերազմին առթիւ, Կիւրոսի յոյն կառավարներ առի՛ց կը մեկնէին դէպի պատերազմի դաշտը, անոնց ընկերացան 17 հայեր. Կիւրոսի յունական հիւպատոսարանին մէջ կը տեսնուէին յոյներ և հայեր, որոնք խանդավառութեամբ Աւետարանի վրայ երգում ընելէ վերջ, խօսք կուտային ձեռք ձեռքի տալով կուռելու թշնամիին դէմ: Այդ հայոց անուններ արձանագրուած են Կիւրոսի հիւպատոսարանին մէջ:

Ամենուս խօսք լինի, որ այդ վերոյիշեալ մասնական երգումը երկու ազգերու մէջ ընդհանուր երգումը լինի. և առանց մոռնալու իրենց պատմական առաջնութիւնները և առաքելութիւնը, այժմ երկուքոյն Ազգեր ձեռ ձեռքի տան, յաղթանակել տալու համար, Արեւելքի մէջ, քաղաքակրթութեան և մարդկութեան իրաւունքները:

Մնամ, Տէր խորագիր, ձեր գ. յարգանք
Մ. ՍԸՎԱԶԼԵԱՆ

Կ. ՊՈԼՍԷՆ ԼՈՒՐԵՐ

Կիրակի առաւօտ Ռիւթերի հեռագիր մը հաղորդեց թէ օգոստոս 6/18ի դէպքին իբրեւ հեղինակ ձերբակալուած ութ հայեր մահուան դատապարտուեալ են: Դատը որ պիտի սկսէր անցեալ երեքշաբթի, ինչպէս կանխաւ ծանուցած էին Պոլսոյ թերթերը, աւարտած ըլլալու է չորաթիւ օրը: Սպասելով անոր մանրամասնութեանց, քաղաքացիներ մեր ընթերցողներուն կը ներկայացնենք «Աժանոս Նասիօնալ»ի մէկ թղթակցութիւնը որ կը պատմէ այդ հայերու ձերբակալման պարագաները: Եւ ընդունան մամուլը վերապահութեամբ հրատարակած էր վայն, առանց ճշգրտութիւնը երաշխաւորելու. կը կարծուի թէ թերքական աղբիւրէ հաղորդուած ըլլայ:

Կալաթա-Մերայի մօտ ու Պանը Օթոմանի մէջ ռումբ արձակել փորձող երկու հայերուն անունն է Կարապետ և Պողոս: Ասոնց ձերբակալմամբ, ստիկանութիւնը յաջողաւ գրտնել հայ յեղափոխական Դաշնակցութեան Պոլսոյ գովիթէին հետքը: Օգոստոս 7/19ին, Բերայի կառավարիչ Էնվէր պէյ Կարապետի ու Պողոսի տուած ծանօթութեան վրայ՝ գրտած էր անոնց երկու ընկերները, Արահամ և Արտաշէս, առաջինը խախաճի անունով ճանչցուած և երկրորդը՝ վարժապետ Յաջըր:

Օրը, Էնվէր պէյ կը կարծէր թէ գտած է գովիթէի պետին Սարգիսի հետքը, որուն լուսանկարը ձեռք անցուցած էր և որուն համար իմացած էր թէ Բերայի մէջ կահաւորեալ տուն մը կը բնակի: Ուրախութեամբ լուսանկար գիշերը, հրահանգ առաւ կեդրոնական գովիթէին՝ յիշեալ տունը երթալ ու Սարգիսը բռնել, քննարկ միջոցին. այս խուզարկութիւն կատարուեցաւ, առանց սակայն արդիւնք մը ունենալու:

Սարգիս որ ինքն ալ իր կողմէ ուշագիւր էր ստիկանութեան շարժումներուն, կրցած էր ժամանակին խոյս տալ: Գայած էր առժամապէս բնակիլ իր երկու ընկերներուն՝ Վարդանի և Միհրանի քով, Լեհ փողոցը, Ֆրանսացի ընտանիքի մը տունը: Հետեւաբար ստիկանութիւնը երկու օր կորսնցուց այս յեղափոխականներուն հետքը: Այդ միջոցին, հայ մը ձերբակալուեցաւ այն վայրկեանի երբ խաղաղական դեպքանաւան գաղթական կը յանձնէր յայտարարութիւն մը՝ հայ յեղափոխական Դաշնակցութեան կեդրոնին կողմէ գրուած ու ժընէվէ թուագրուած: Միեւնոյն ժամանակ կը ձերբակալուէր մանկամարդ հայ աղջիկ մը որ պաշտօն ունէր միւս գեղականատանց ուղղուած Յայտարարութիւնները յրուելու:

Երկուշաբթի, 11/23 օգոստոս, ստիկանութիւնը ալ գրեթէ յուսահատած էր, երբ անգամ կորսնցուցած ըլլալով յեղափոխական գովիթէի պետին հետքը: Բերայի կառավարիչը գաղտնի ստիկանութեան բոլոր գործակալներուն յանձնեց Սարգիսի լուսանկարէն մէկ մէկ օրինակ: Յաջորդ օրը, երեքշաբթի, առաւօտուն կանուխ, ստիկանութեան գովիթէր Աարօն Էֆէնտի՝ քաղքենիի հագուստով ծպտուած ու գլուխը թաղեայ գլխարկ մը գրած, կը պտտէր Ղալաթիա, երբ գիտեստան մը մէջ նշմարեց մարդը հագուած երիտասարդ մը որ կը համապատասխանէր իրեն հաղորդուած նկարագրին. բայց որովհետեւ կատարելապէս ապահով չէր, ներս մտաւ ու գնաց նստիլ կասկածելի անձին մօտ, սեղանի մը առջեւ:

Շատ չանցած, Աարօն Էֆէնտի կը համոզուէր թէ վնասուած հայը ան է: Այս վերջինը սակարկութեան մէջ էր յոյն նաւավարի մը հետ՝ ինքզինքը օտար նաւ մը փոխադրել տալու համար հինգ ոսկիի փոխաւ: Սարգիս, վասն զի նոյն ինքն գովիթէին պետն էր, այդ գումարը նաւավարին տալէ ետք կը պատրաստուէր մեկնիլ գիտեստանէ, երբ Աարօն Էֆէնտի վրան նետուեցաւ ու ձեռքերը կապեց զինուորականի մը օգնութեամբ որ այդ պահուն անկից կանցնէր: Սարգիս թէեւ փորձեց իր ընկերները գործածել, բայց չի յաջողեցաւ: Իր վրայէն գտնուած թուղթերուն միջոցաւ ստիկանութիւնը գտաւ նաև միւս երկու հայ յեղափոխականներուն՝ Վարդանի և Միհրանի պահուած տեղը:

Նոյն օրը, առտուան ժամ 9ին, Լեհ փողոցին երկու բերանները զինուորական շրջաթայի տակ կանուռէին: Կեդրոնական գովիթէի Մէհմետ Այի պէյ ինչպէս նաեւ ժամտարմաներու գնդապետ Հաֆըզ պէյ, ընկերակցութեամբ Ֆրանսական դեսպանատան թարգման Պ. Բիւլնէի, խումբ մը ժամտարմաներով Լեհ փողոցի այն տունը գացին որ

կը գտնուէին վերոյիշեալ երկու հայերը: Միհրան երրորդ յարկը կը բնակէր ու Վարդան չորրորդ յարկը: Պ. Բիւլնէի ինքզինքը, տանտիրուհին որ Ֆրանսուհի մըն էր, ստիկանութեան ցոյց տուաւ Միհրանի խուցը: Միհրան որ և է ընդգլխութիւն չըրաւ: Գաղով Վարդանի (որուն բուն անունը Նազարէթ է, ուսուցիչ, պարսկական հպատակ), ստիկանները տնտեսական ընկերները քաշեց և փորձեց անոնց վրայ պարպել, առանց սակայն յաջողելու: Երրորդ փորձին, հրապէսը իր վրայ դարձուց և ուղեղը պայթեցուց:

Յեղափոխական գովիթէին պետը Սարգիս՝ քանակութեամբ քանակութեամբ սարսափեց և իր ուսմանը Բարիկ առած է և գրեթէ ամիսէ մը ի վեր Պոլիս կը գրտնուէր: Բնիկ Պոլսեցի պատուաւոր հայ ընտանիքի մը կը պատկանէ: Կը խօսի Ֆրանսերէն, անգլիերէն, հայերէն և թուրքերէն: Ճէնթըմէնի մը երեւոյթն ունի, շատ մաքուր հագուած: Միհրան, որուն բուն անունը Գեռ յայտնի չէ, ինքն ալ ուսուցիչ է և քանի մը լեզուներ գիտէ: Սարգիս և Միհրան նախ և առաջ ուրացան իրենց մանակցութիւնը, բայց երբ Բերայի կառավարիչ Էնվէր պէյ անոնց խօսեցաւ Կարապետի, Պողոսի ու Արտաշէսի վրայ — որոնք յանձն առած էին ուսման պայթեցնելու գործը — Սարգիս գոչեց. «Ի՞նչ, Կարապետ, Պողոս և Արտաշէս մեռած չե՞ն» — «Ո՛չ, պատասխանեց Էնվէր պէյ, հիմայ պիտի տեսնէք»: Ու երբ ձերբակալուածները բերին: Ասոր վրայ, Սարգիս և Միհրան կատարեալ խոստովանութիւններ ըրին:

* * *

Կ. Պոլսէն կը հաղորդեն Լոնտոնի թերթերուն թէ Ահաթօլուի օսմանեան գովիթէր (Շաքիր փաշան ըլլալու է) հեռագրեր է Դրան թէ Սերաստիոյ մէջ կացութիւնը մտահոգութիւն կը պատճառէ և կը վախցուի որ հայերը ոտքի ելնեն:

* * *

Կիմանանք թէ Օրմանեան Պատրիարքը առաջին կարգի Օսմանիէ պատուանշան ստացել է Սուլթանին գահակալութեան տարեգարձին օրը:

Լ Ս Ա Ր Ա Ն

Ընթերցասիրաց ընկերութեան կողմէ խոստացուած եւ հասարակութեան կողմէ ապաստած շարաններու շարքը պիտի բացուի առաջիկայ շաբաթ գիշեր 11 սեպտեմբեր:

Անդրանիկ աշենախօսք պիտի ըլլայ Տիար Յակոբ Ասատուեան, ծանօթ փաստաբանը, որ իրեն նիւթ ընտրած է Մուրակներու բնակելիութիւնը:

Թէեւ նիւթը շատ շուրջ է, բայց փաստաբանի մը պերճախօսութեան սակ կըրնայ շատ սիրուն causeurի ձեռով ներկայացուիլ, եւ Տիար Ասատուեանի խօսքը կարողութիւնը մեզի ծանօթ ըլլալով՝ ապահով եմք որ շատ օգտակար եւ հաճելի զոյգ մը ժամեր մեզ վերապահուած են շաբաթ գիշեր:

Ընթերցասիրաց ընկերութեան գործա-

դիր ժողովը միայն կողմէ ամեն միջոց ձեռք
ստանալ է երեկոյնի փայլող աւելցնելու հա-
մար:

Գանձիւի գրասենեակում այս ամիս
մէջ, տարակոյս չունիմք որ հայ երկաւն
հասարակութիւնը պիտի փոքրայ յաճախեց
Ընթերցասիրացին առանձն ուր այս ձմեռ
մէկէ աւելի անակնկալներ պիտի ընծայուին
ընկերութեան անդամներուն եւ քաժանորդ-
ներուն:

ՅԱՅԳԱՀԱՆԴԵՍ

Այնքան արագ հայ գաղթականներուն
ի նպաստ կազմակերպուած հանդէսը, որ
սեղի պիտի ունենայ յառաջիկայ կիրակի
գիշեր Այնաւայր քաղաքին ու պարսեզին
մէջ, փայլուն յաջողութիւն մը կը խոստանայ:
Յայտագիրը պէտք ունի ընդունալ է.
Փանթօշներու ներկայացում, նուագահանդէս,
վիճակահանութիւն, մոզակա խաղեր, քով-
պոյզ, հրախաղութիւն եւ պարահանդէս:

ՊՈԼՍԱԿԱՆ ՏԻՊԱՐՆԵՐ

9.

ԳՐԱԳԵՏԻԿԸ

Տասնութին քսան տարու, երկայն մագեր,
աղիոց մը և ձեռքը վրայսկան մը կամ կեղծանա-
կանէն և կամ Պէրսիքներէն:

Ուսումնական խորհրդոյ անգամ չըլլալուն կը
զարմանայ ու կը զարմանայ:

Կը կարծէ թէ Գրանտերէն գիտէ: ձեռքիս
Շարքի մէջ յոգուած տարով կսկսի և չոգիան
գործ մը փնտռելով կը վերջանէ:

Մէկ ու կէս մէկը երկայնութեամբ անուններ
ունեցող գրքեր ունի թեւին տակ:

Կը յայտարարէ թէ թէն, Սրէնէր, Բառաշ,
Շորէնհաւեր, Անդ-Պէպ կը կարդայ, լայց հաւա-
տացիք որ Բըրի Բարիքիէն յաւելուածը միայն կը
թղթատէ սենեակին մէջ առանձնացած:

Իր հագուստին խնամք չի կրնալ տալուն յան-
ցանքը՝ գրականութեան վերագրել կուզէ:

Օձիքը միշտ ազատու եղած է նորեւեղ գրագէ-
տին և եղունգները մոտ մը սուգ կը սրահէ:

Թատարն երթալ կուզէ լայց չի կրնար:

Հոգեբանական և իմաստասիրական հարցերու
վրայ յոգեւածներ գրելու կեղծ, սակայն նամակի
մը հասցէն չէնքով չհարկաւ գրելու... չի գիշեր:

Մարգարային ընկերութեան գէմ ընդհանրապէս
և Պարոյ հայ օրիորդներուն գէմ ի մասնատորի քէն
պահած է, որովհետեւ իր ստալին յոգեւածը երեւ-
նաւոր Սան-Սթեֆանոյէն սկսեալ մինչեւ Գալար-
ները ամեն հայ աշխի չէ սիրահարած իրեն:

Երեկոյնի շերտար անաստուծի հովեր աններու
համար և այնպէս համարուած է թէ նշանաւոր գրա-
գէտ ըլլալու առաջին պայմանը Աստուած չի ճանչ-
նալն է:

Սիրայ վրայ 2800 տող յանգուար և 25000 տող
արձակ գրութիւններ ունի և երբ օր մը աղջկան մը
հետ մինակ կը մնայ՝ իր գործնական կեանքէն anec-
dotes-ներ պատմելէ անդին չունցիր:

Հօրը հետ շարունակ սրբողած է:

Իրեն համար յառաջատուութիւնը՝ յոգեւածի մը
ետ գալուն մէջ կը կայանայ:

Ոչ օրի կը գործածէ և ոչ ալ ծիսախոտ, գրա-
կանութիւնէ բացած միակ օգուտնին է այս:

Իրենց համար Հայ ազգէն յանցաւոր եթէ
գրագէտիկը Պէտրոսեանէն ետք մը չի կրնար վարձել:

Երեսուն տարու եղած տոները ստանաւորն ալ
կը մոռնայ, Փրանսեանին ալ, տառասիրտներ կընէ
գրած տոները. մարդը կը հագուի և տառա օղի
կը խմէ:

Նախկին գրագէտը ալ գործի մարդ եղած է
և ուրիշներուն վրայ կը խնդայ:

Այնուհետեւ լրագիր անգամ չի կարգար:

Ուրիշ կը հետեւցնեն թէ ամեն հայ իր կարգին
գրագէտ եղած է երկրասարքութեանը:

ՌԱՏԱՄԻՍ

ՕՐՈՒԱՆ ԼՈՒՐԵՐ

Սրահասարի Կ. Պարոյ թղթակցին մէկ
հեռագրին նայելով, անցեալ հինգշաբթիէն
ի վեր Մարտապէս անցաւ եղբւր է Անաստ-
լու-Հիւսիս իր ծովեղերեայ բնակարանէն: Կը
կարծուի թէ փոխած ըլլայ:

—Սէպտեմբեր անուն անխիղճական մը Նա-
խորդ շարժումն ընկալելէի հարուածներով ծան-
րապէս վիրաւորած էր Պարսէլինի ստիկանու-
թեան պետը ու անոր օգնականը որոնք բուռն
կերպով կը հալածէին Սպանիոյ անխիղճա-
կանները: Զինուորական ատեան մը անմիջա-
պէս դատելով Սէպտեմբեր, որ բռնուած էր,
քառասուն տարուան շղթայակապ աշխատու-
թեան գաղտնաբերուեց զայն:

—Գերմանիոյ բանակին ստիկանութեան
ներկայ գտնուելու տուիւ, Իտալիոյ թագա-
ւորը այցելութիւն տուաւ Վիլհելմ կայսեր:
Ունեցելով թագաւորն ու Մարկիթ թագու-
հին շատ սիրով ընդունելով ինքն մը գտան
Գերմանիոյ կայսեր ու կայսրահայն կողմէ, ի
Հոմպուրկ: Երկու վեհապետներն ինչպէս նաեւ
իրենց աշխարհին գործայ նախարարները խոր-
հրդակցեցան օրուան քաղաքական ինքնիշխե-
րու վրայ:

—Հնդկաստանի գէպերը սկսած են մը-
տահոգութիւն պատճառել Ֆրանսայի: Բա-
րիզեան մամուլը դիտել կուտայ թէ իսլամա-
կան շարժումը կրնայ նաեւ ծառայիլ Ալճերիոյ
մէջ:

—Ռիւթերի հեռագիր մը կը հաղորդէ թէ
Կրետէիցիներն հաւանած ըլլալով կղզին ինք-
նօրինութեան, ծովակալները ոչաշէր են պա-
շարւոր վերցունել ամայս 19ին: Եւ սակայն
որչափ որ կը յիշենք, ինքնօրինութեան ծրա-
գրին առաջին յոգեւածն անգամ ընդունուած
չէ տէրութեանց կողմէ: Մովակալներու այս
որոշումէն շարժւած մը առաջ, Դուռը ծանու-
ցագիր մը ղրկելով՝ պահանջած էր որ եւրո-
պական զօրքերն ու մարտանաւերը հեռաց-
ուին. երկրորդ ծանուցագրով մը, խնդրած
էր որ Կրետէի կառավարիչը օսմ. հայտակ
ըլլայ ու թուրք պահապան զօրքը պահուի
կղզին մէջ: Գերմանները պատասխանեցին
թէ հաշտութեան կնքումէն ետքը նկատուող-
թեան պիտի առնեն այս առաջարկները:
Այս պայմաններուն մէջ, ինչ ապահովութեամբ
պիտի վերցուի պաշարումը:

Գալով հաշտութեան կնքման հռչակաւոր
բանակցութիւններուն, նոր յետաձգում մը
կրեցին անոնք Ռուսիոյ և Ֆրանսայի մերժման
պատճառաւ որոնք չեն ուզեր երաշխաւորել
Յունաստանի կնքելիք փոխառութիւնը պատե-
րազմական տուգանքի առաջին մասնավճարին
հատուցման համար: Անգլիա մինակ մնալով,
ինքն ալ քաջուեցաւ այդ հոգն ստանձնելէ:
Միւս կողմէ, թուրքերը միլիթ մը և կառա-
վարական պաշտօնատուն մը կառուցանելու
վրայ են ի Վօլօ և Պարսէն ձմեռնային հա-
գուտ կը ղրկուի թեաւորի օսմ. բանակին
համար: Ասոնցմէ դիւրին է հետեւցունել թէ,
Յունաստան ինչ յոռեւեւս անձկութեան մը
մէջ կը գտնուի:

ԱՊՈՒՔԻՐԻ ՈՃԻՐԸ

Շարաթ իրիկուն ուշ տուն Ալեքսանդրիոյն
բաշտած հեռագիր մը կրկին մարդասպանութեան
մը լուր կը բերէր ի Գահիւր ուր երաշխական գա-
ղութին մէջ մեծ յաղթանակ պատճառեց:

Այդ օրերն զոհերն են անգլիացի Պ. Ալեքսանդար
Վէլլ և իր ձիապանը, տեղացի արար մը:

Պ. Վէլլ Ապուրի Լիմիթը Գրեքիսի յանդի-
նելէն էր, որ պաշտօնով Ռուսիէն Ապուրի կեր-
թար:

Ռ. Բրաթթէն շարաթ լուսնաւոր գիշերը ժամը եր-
կուքին տոնները այդ կրկին օճիքը դարձուած է
Ապուրիի մօտ Եթովպիոյի ազարակին շրջակայքը:

Եթովպիոյի ազարակէն Պ. Վէլլ ձիաւն ու
առնց ձիաւարի անցնելը տեսնուելով, հոն տեղ
գտնուող պաշտօնեաներ զօրաղբուրթեան մը կասկածը
ունեցան և անմիջապէս երան խուզարկութիւններ
ընկելու:

Առաւօտեան մօտ Պ. Վէլլ արիւնքով տրտաւ գի-
տակ գտնուեցաւ, հրապարակ վրէժ հարուածներով
ծակելու: Քիչ մը անդին արար ձիապանին գի-
տակ կը տեսնուէր, հրապարակ երկու հարուածներով:

Պ. Վէլլ գրգռուեցաւ զորս դարձուած ըլլա-
լին կը հետեւցուի թէ օճիքը գործելն ետքը մար-
դասպանը կամ մարդասպանները վրան գլուխը խու-
զարկած էին, հետեւարար կը կարծուի թէ օճիքին
շարժառիթը գողութիւն եղած է:

Շարաթ տառա ստիկանութիւնը օճիքին վայ-
րը հասնելով, ինքզինքն անգլիացիին գիտակ Ալեքսան-
դրի տրաքոնէներու հիւսնաւորուող փոխաղբուրթ
է ուր կատարուեցաւ գիտնութիւնը:

* * *

Ապուրիի մէջ շատ մը ձերբակալութիւններ
տեղի ունեցան:

Երէկ իրիկուն Քաթր Տափալէն կը հեռագրեն
թէ ստիկանութիւնը յաջողած է ձեռք անցնել
մարդասպանը որ Ապուրիի պահապաններէն պիտի
վի մըն է:

Ֆրանսացի երեսփոխաններու, գրագէտ-
ներու, երեկոցականներու, բրօքսիտներու,
հրապարակագիրներու կողմէ ի նպաստ հայոց
պատրաստուած հանրագիրը, որ քանի մը հա-
րիւր ստորագրութիւն կը կրէ, նախորդ շաբ-
թուն յանձնուել է նախարարապետ Պ. Մէլիէի:

ԻՇԽԱՆՈՒՀԻԻ ՄԸ ԱՐԿԱԾՆԵՐԸ

Գանի մը ամիս առաջ, Եւրոպայի ու Ա-
մերիկայի մէջ ընդհանուր հետաքրքրութեան
առարկայ դարձաւ Տօն Գարլաի աղջկան՝ Էլ-
վիւ իշխանուհիին փախուստը իտալացի Փալի-
պատիկերհանին հետ: Երկու սիրահարները,
զիրենք գտնուել համար եղած խուզարկու-
թիւններն ի դերեւ հանելով, յաջողած էին
Ամերիկա անցնիլ. սպանիացի իշխանուհին
այս պահուս կաշխատի նորաձեւութեանց վա-
ճառատուն մը մէջ, իր ապրուստը ճարելու
համար: Վաշինկթոնի իշխանուհին Սընսեյ
շարաթաթերթը կը հրատարակէ տեսակցու-
թիւն մը զոր իր աշխատակիցներէ մէկը ու-
նեցեր է իշխանուհիին հետ:

Հետաքրքիր մեղադրութիւն մը անցուցինք, յայտա-
րարէր է Տօն Գարլաի աղջիկը: Զարմանալին հոն
է որ, այն միջոցին ուր գմեղ շատ հեռու կը կար-
ծէին, մենք Վենետիկ կը գտնուէինք: Հաւատացէք
որ զՂալաթ չեմ ըրածիս վրայ, և բաւական է որ
միտքս բերեմ Վենետիկի մէջ անցուցած տառաջին
շարաթները՝ ապագային վրայ փառաբանութիւն ունե-
նալու համար:

Վենետիկէն, պատկերահան ու իր սիրու-
հին Ալֆէ կերթան և հոն տասներկու օր մնա-
լէ ետք Մարտիկա ուր քանի մը ժամ միայն

կը կենան : Մէկ շունչով կը կտրեն կանցին
Փրանսան ու Հալիքէն Նորմանի շողենաւը
նստելով Նիւ-Եորք կողմերին :

Նախ և առաջ, կը շարունակէ իշխանակնին,
Մօտեն Օթէլ իջնաք, Պ. և Տիկին Ռիբօրտի ծած-
կանունով : Միտք ունէինք քաղաքին շրջակայքը գեղջ-
կական առն մը գնել : այս նպատակով, վեց շարքով
պայտներ կատարեցինք ամեն կողմ, ատեն ատեն
Մօտեն Օթէլ դառնալով : Սիրուն վիզայ մը գնելով
կը պատրաստէինք, երբ մեր հարստութեան մեծա-
գոյն մասը պայտնակող պայտակներս գողցուեցաւ
պանդուկին մէջ :

Խռելարի թիւները գիւրացներու համար հար-
կադրուեցանք մեր թուն անունը յայտնել Նիւ-Եորքի
ոստիկանութեան՝ քաղաքը խոստում առնելէ ետք
թէ որ և է անգաղտնադատութիւն չի պիտի ընէին :
Այս խոստում այնքան բաւ կերպով յարգուեցաւ, որ
երեք օր չանցած Նիւ-Եորք-Հերլիք խմբակը մը
կուգար 1200 ոսկի առաջարկել ամուսնոյ, իր յի-
շատակները գրելու համար : Որքան ալ նիւթական
նեղ զրաթեան մէջ կը գտնուէինք, կըմբռնէր թէ
չէինք կրնար ընդունել այս առաջարկը :

Չեղբերինս գտնուած բիշ մը զրաթով վաշինկ-
զըն եկանք ուր Մօտեն-Օթէլի անօրէնին կողմէ ա-
մուսնիս յանձնարարուած էր բարեկամի մը որ հոյա-
կապ տուն մը կառուցանել կուտար : Ֆօլքի յանձն
տաւս կարգանկարները, և այս պահուս զրաթած է
սեղանաւան ու արտէին ձեւերները նկարելու : Իսկ
պայտակներս հետքը անգամ չի գտնուեցաւ :

Ամուսնիս ամեն օր նորանոր յանձնարարութիւն-
ներ կընդունին, հիմակ որ ո՛վ ըլլալին գիտեն, ամեն
մարդ կուգէ իր նկարներէն ունենալ : Իրաւ ալ է որ
տաղանդաւոր նկարիչ է : Իսկ իմ ներկայութիւնս
բազմաթիւ յաճախողներ կը գրաւէ Ֆ... վաճա-
ռատան մէջ որ առատան ժամ 9էն մինչեւ իրիկ-
ուն ժամ 7 զլիարի կը պատրաստեմ որուն համար
մասնաւոր սէր մը ունեցած եմ միշտ : Քանի մը պառ-
կըմներու այցելութիւնն ընդունեցի, քաղաքականա-
պէս մերմէրով սակայն անոնց շահարեք պայմաննե-
րը, վառն գիւ յարեց իշխանակնին, կը մտա-
ծեմ որ եթէ կեանք մը համար պատուաւոր թան է
իր հոյքը ճարել ձեռաց աշխատութեամբ, իշխա-
նակն ըլլայ կամ ոչ, միւս կողմէ նոյնանք կողմ
ինծի՝ բնիկ վրայ ելլել ի տես հասարակութեան և
նախաձեռնար կը սեպեմ անօթութենէ մեռնիլ քան
այս բանին յօժարիլ :

Այս ամենը լաւ, միայն թէ Խլիսքրէքոս
Սընէյ հանգէտին հրատարակութիւնը ամե-
րիկեան գիւտ մը չըլլայ, ուէրլամ մը Ֆ...
վաճառատան գլխարկները քչել տալու համար :

Ա Ձ Դ

Տիկին Սոֆիկ Ազգապետեան, մանկաբարձ, վկայեալ
կայսերական վարձարանէն, այժմ բնակութիւնը Գա-
հիքէ հասցեստ. քաղաք, պատիւ ունի ծանուցա-
նել հայ հասարակութեան որ պատրաստ է իր խնամք-
ները տալ իւրեք պէտք ունեցողներուն :

Իր երկարամանակեայ փորձառութիւնը եւ խղ-
ճամբս աշխատութիւնը զինքն բաղաժիտ առաջնա-
կարգ մանկաբարձութեան կարգը կ'սնցընեն :

Դիմել Ծուպրա, Չամաքի փողոց քիւ 12: Սե-
կուաքի եւ հինգաքի օրերը առաւօտուն կը գր-
նուի Սարաֆեան պեղարանը ի Պեն-Էլ-Սուրեն :

ԴԻԻՐՈՒԹԻՒՆ, ԴԻԻՐՈՒԹԻՒՆ, ԴԻԻՐՈՒԹԻՒՆ

Ստորագրեալ պատիւ ունիմ ծանուցանելու քի
պատրաստ եմ գիւրամասչելի տոկոսով փոխանու-
թիւն ընել մեր հայ գաղթականներուն որոնք գրաւ իր
ձեռքին դուրսուրեան կը հանդիպին խղճամբս սա-
րաֆ մը գտնելու :

Խանութիւն մէջ կը վաճառուին նաեւ տեղական
վիճակահանութեանց տոմսեր, ամսական վճարում-
ներով :

Ս. ԶՈՒՐԻԿԻ ՕՂԼՈՒ

Շահա Ապս-Էլ-Ազիզ, բաւարան կից

Le Gérant: HENRY SAKAKINI

Տպագրութիւն ՓԱՐՈՍ Երզրի

ԴՐԱՄԱՏՈՒՆ ԱԼԷԿՍԱՆՏՐ Ժ. ԲԵՍՍԱՉՈՂԼՈՒ

Գ Ա Ն Ի Ր Է

Դիմում և վաճառում աշխատողներու :
Կանխաձեռնարկ ելմով գլխաւոր : Կատան-
ձեռք յաճախողներու հաշիւին համար պան-
ձումներ ընել եղիպատի և աշխատահանի
զլիստար քաղաքներու մէջ : Պայմանագրաւ-
ար վաճառում ամեն սեռակ պարգեւաւոր
արժեքով երեք, օրինաւոր պայմաններով :

Եւելի մանրամասն տեղեկութեանց համար գի-
մել Պոլսը փողոց Եղիպատի հիւանդատան գլխ-
Բեմադրողը զրաժանուր :

ՀՐԱՆՏ ԱԶԱՏԵԱՆ ԱՐԴԿՈՂ ԵՒ ԼՈՒԱՅԱՐԱՐ

Էօզպէքիէ, Պոլսի լեւոնի օթէլին քովըն-
աի կանաքակապ փողոցը բացած խանութին
մէջ ամենէն զգուշահանները պահապանելու
եղանակաւ կ'արդուէ շապիկներ և այլն ա-
վորական զիններով :

ԵԳԻՊՏԱԿԱՆ ԵՐԿԱԹՈՒՂԻՔ

ԺԱՄԱՆԱԿԱՅՈՅՑ ԵՐԹԵԻՆԻՈՒԹԵԱՆՑ

Սկսեալ 1 Փետրուար 1897

ԳԱՀԻՐԷԻ ԱՂԵՔՍԱՆԳՐԻՈՅ ԳԻԾ

Գ Ա Յ Ա Ր Ա Ն Ք	Թաւան 1,2,3,4	մ. յ. զ. 1,2,3,4	Գլխ. ուղ. 1,2,3,4	Օմ. նիւթ. 1,2,3,4	Էրբըրէս 1, 2 կգ.	Օմ. նիւթ. 1,2,3,4	Էրբըրէս 1, 2 կգ.	Օմ. նիւթ. 1 2 3 կարգ	Էրբըրէս 1 2 3 կարգ
Գաւիթ	մեկ. 4 45	—	7 —	8 15	9 30	3 30	4 45	7 15	11 —
Պէնէն	» 8 —	—	7 49	9 32	10 15	4 47	5 29	8 32	12 35
Թանթա	» 11 28	—	8 30	10 30	10 55	5 45	6 7	9 30	1 44
»	մեկ. 11 48	6	8 34	11 15	11 —	6 26	6 11	—	1 54
Տաման	» 3 10	7 34	9 41	12 49	11 58	7 59	7 7	—	3 51
Ս. զ. Բաւար	» 6 25	9 15	10 45	2 30	1 —	9 40	8 7	—	5 50

ԱՂԵՔՍԱՆԳՐԻՈՅԷ ԳԱՀԻՐԷԻ ԳԻԾ

Գ Ա Յ Ա Ր Ա Ն Ք	Օմ. նիւթ. 1,2,3,4	Էրբըրէս 1,2,3,4	Օմ. նիւթ. 1,2,3,4	Էրբըրէս 1 2 կգ.	Թաւան 1,2,3,4	Օմ. նիւթ. 1,2,3,4	Էրբըրէս 1 2 կգ.	Օմ. նիւթ. 1 2 3 կարգ	Էրբըրէս 1 2 3 կարգ
Ա. զ. Բաւար	մեկ. —	7 —	7 15	9 —	9 20	2 30	4 15	6 15	11 —
Տաման	» —	8 6	8 58	10 2	12 14	4 13	5 15	8 6	1 9
Թանթա	» —	9 12	10 28	11 —	2 39	5 43	6 10	9 40	2 56
»	մեկ. 6 15	9 16	11 20	11 5	2 49	6 30	6 14	—	3 6
Պէնէն	մեկ. 7 18	9 59	12 23	11 46	4 43	7 33	6 52	—	4 25
Գաւիթ	մեկ. 8 30	10 45	1 35	12 30	6 25	8 45	7 35	—	5 50

ԳԱՀԻՐԷ-ՍԻԷԶ

ՊԵՆԱՅԻ ԶԱՄԱՅ

ՍԻԷԶ-ԳԱՀԻՐԷ

ԿԱՅԱՐԱՆՔ	ԱՌԱՐՈՏ	ԵՐԵԿՈՅ	ԿԱՅԱՐԱՆՔ	ԱՌԱՐՈՏ	ԵՐԵԿՈՅ
Գաւիթ	մեկ. 11 40	7 —	Սիւզ (բարակ)	մեկ. 9 50	—
»	Էրբըրէս 12 28	7 48	»	—	3 30
Պէնէն	մեկ. 12 33	7 53	Խանութիւն	» 1 20	7 5
»	»	»	»	»	»
Զաւարդիկ	» 1 34	8 54	»	»	»
»	մեկ. 1 44	9 4	»	»	»
Խանութիւն	մեկ. 3 40	1 —	»	»	»
Սիւզ կայարան	» —	5 —	»	»	»
Տօք (բարակ)	» 6 55	—	»	»	»